եր Սելջուկներից կամ անզոր դարձրած նրանց։ Հաղթական զորապետը նվաճում է Ատրպատականի մի մասը Մարանդ և Արդաբիլ քաղաքներով *, բայց վերադարձին հիվանդանում է և մեռնում 1212 թվին։ Նորա մահվանից հետո Իվանեն շարունակում է գործը, բայց վոչ նույն հաջողությամբ և ծավալով, այն էլ ավելի յերկրի ներսում, թեև նորա ազդեցությունը վիրահայկական պետությունների մեջ ավելի է զորանում, քան առաջ։ Դեռ ևս Թամարի ժամանակ († 1207/8) նա ստացել եր աթաբեկության աստիճան, ամիր սպասալարությունը հանձնվեցավ Զաքարիայի վորդի Շահնշահին, իսկ Իվանեի նախկին պաշտոնը՝ պալատական զորքերի հրամանատարությունը՝ մյուս Զաքարիայի վորդի Վահրամին **։ Գեորգի Լաշայի ժամանակ, առաջին տարիները հատկապես՝ Իվանեն տերության առաջին մարդն եր իրապես, թագավորի անվանական գերիշխանության տակ։ Վրաց թագավորության լավագույն շրջանը՝ Գեորգի Գ-ի վերջին տարիներից սկըսած, Թամարի, Գեորգի Լաշայի, նորա քույր Ռուսուդանի և Գեորգի Լաշայի վորդու Դավթի ժամանակ, ամբողջ պետության ներքին և արտաքին դեկը Զաքարյան իշխանների ձեռքին եր, և յերբեմն նրանցից եր կախված գահի թեկնածուներից սրան կամ նրան նստացնել։ Գանձակեցին պատմում է, թե Վահրամ Գագել ինչպես պաշտպանում է Գեորգի Լաշայի վորդի Դավթի թեկնածությունը ընդդեմ Ռուզուդան թագուհու, վոր կամենում եր յուր վորդուն թագավորեցնել. «Եւ առեալ զնա մեծամեծ իշխանացն, որք էին հնազանդ Թաթարին, Աւագին, որ զորավարն էր, և Շահնշահի, որդւոյ Զաքարիայի, և Վահրամայ և որդւոյ իւրոյ Աղպուղին, տարեալ ի Մծխիթա, կոչեցին և զկաթուղիկոսն Վրաց, և օծին զնա թագաւոր, և էր անուն նորա Դաւիթ [1]։

Արդեն յիշեցինք, թե պատմական Հայաստանի մեծագույն մասն ընկել եր Զաքարյանների ձեռքը, ավելի մեծ քան Բագրատունյաց և Սյունյաց թագավորությունները միասին։ Ի զուր չե նրանց իշխանությունը «աշխարհակալ տերութիւն», «աշխարհակալութիւն», «պետական իշխանութիւն», «թագաւորութիւն» բառերով սահմանվում [2]. զորանով վոչ միայն նրանց տիրապետության ընդարձակությունն է շեշտվում, այլ և իրական դիրքը. նորանված Հայաստանը Զաքարյանների ձեռքի տակ վիրական մի սոսկ դավառ չե, այլ մի պետություն. արձանագրությունները մեզ անվիճելի ցուցումներ են տալիս այդ մասին։ Նոքա հանդիսանում են վորպես Հայաստանի գերագույն պետերը, իսկ մնացած իշխանները նրանց ստորադրյալ վասալներն են. Զաքարիայի և Իվանեի, Շահնշահի և Աւագի անունով հաղվագյուտ չեն թագավոր, շահնշահ և մինչև իսկ կեսար տիտղոսները։ Անիի Աղջկաբերդի յեկեղեցու ավագ խորանի ձախ ավանդատան գլխին կա հետևյալ արձանագրությունը. «սբ և մեղսաքավիչ պատարագն / որ ի սմա կատարի, Սահակդխտո է / ծնաւղի Զաքարեա եւ Իւանեի թագաւորաց Հայոց» *։ Զաքարիայի վորդի Շահնշահը Խծկոնից վանքի 1216 թ. մի արձանագրության մեջ կոչված է «ածասէր բարեպաշտ թագաւոր» **. Բագնայրի նշանավոր ավետարանի (ԵՂմ. № 230) հիշատակարանի մեջ, գրված Հոռոմոսի Իգնատիոս նշանավոր գրչի ձեռքով [1], Շահնշահի համար ասված է, «յաջորդեալ զաթոռ թագաւորութեան հաւրն իւրոյ», իսկ նորա վորդի Զաքարիան կոչված է «թագածին»։ Զաքարե մեծն ինքն իրեն, ինչպես և ուրիշները նրան և Իվանեին անվանում են «շահնշահ» [2]։ Իվանեի կինը Խոշաք Շիրակավանի յերկու արձանագրության մեջ իրան անուանում է «վրաց և հայոց թագոհի» կամ «վերաիշխող տանս վրաց եւ հաց եւ նովին թագոհի» [3]։ Զաքարյաններն իրենց համարում են Բագրատունյաց արքայական տան ժառանգներ և Աստուծո նախախնամությամբ ստացած «սեփական ժառանգութիւն նախնեաց» [4]։ Գեղարդի տաճարը շինված է «ի ժամանակս թագաւորազնոյն Զաքարիայի եւ Իւանէի նորին հարազատի» [5]. Իվանե աթաբեկը նույն վանքի

---

* Գանձ. 175. Վարդան 183. Brosset Histoire. 468—473. Վրաց պատմագիրը յերկու արշավանք է նշանակում դեպի Պարսկաստան, և յերկրորդ անգամ Զաքարիային հասցնում է մինչև Խորասան և Վրկանաց աշխարհը, վոր չափազանցություն է և չե ստուգվում հայ աղբյուրներով։

** Վրաց պատմիչը (Brosset. 474) Զաքարիայի մահը ավելի վաղ է նշանակում քան Թամարինը, մինչդեռ ըստ Վարդանի սորա թագավորության տևողությունը 23 տարի հաշվելով, մահը 1208-ին պիտի նշանակել։

1 Գանձ. յեր. 273։

2 Զալ. Ա. 132. Բ. 157.—Շահխ. Բ. 182, 370. | Բարխ, Արցախ. 366.—Կոստանյան. Վիմ. Տարեգիր. 47. 50.—Սարգսյան. Տեղագր. ի փոքր և ի մեծ Հայաստան. Վենետիկ. 1864. յեր. 180.—Ալիշան. Շիրակ. 117.—Ձեռ. ԵՂմ. № 230. յիշատակարանը։

* Համ. Զալ. Բ. 13.—Շիրակ. 58.—Կոստ. Վիմ. Տարեգիր. 41։

** Այս արձանագրությունը յուր ամբողջությամբ բանասիրության դեռ ևս յայտնի չե. գրված է «ի ՈԿԵ =1216 թուին։ Արձանագրությունը հետաքրքրական է «Սարգսի Փարշկեանց» յիշատակությամբ, վոր նկարագրել է Անիի Փրկիչ եկեղեցին։

1 Տես մեր Գրչության Արվեստը. մասն Գ. Վաղարշապատ. 1913. յեր. 33. Իգնատիոս գրչի մասին նաև Ալիշան, Շիրակ. յեր. 27։ Ներքև յիշվելիք Բոնավորի և Տղատիկնոջ նկարազարդ յերկաթագիր ավետարանն էլ սորա գործն է։

2 Արձ. Հաղբատի. ստուգված մեր կողմից. Զալ. 58. Ցերգնկյան 57. Շահխ. Բ. 182. Սարգսյան 111. 112. 149։ Н. Я. Марр. Камень с армянск. надписью из Ани в азиатском музее. Известия имп. Академии наук 1910. Արտատպ. СП. 1910.—Ալիշան.—Շիրակ. 41. 43. 117. 164.—Գետաշենի յերկաթ. ավետ. յիշատակարանը, 1211 թ., այժմ ԵՂմ.-ի մատենադարանում։

3 Սարգսյան 170. Ալիշան. Շիրակ 10։

4 Շահխ. Բ. 370. Բարխուդարյան. Արցախ. 366։

5 Արձ. Գեղարդի. տես. Ցավելված Ա. 3. Համ.